

# ՔՆՆԱՐԿՈՒՄ՝ ՆՎԻՐՎԱԾ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ, ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՏՉԵԼԻՈՒԹՅԱՆ ՈՒ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՀԱՐՑԵՐԻՆ

17.11.2018 15:41



ՀՀ փաստաբանների պալատում 2018թ. նոյեմբերի 16-ին, անցկացվել է «Փաստական տեղեկություններ, իրավունքի գերակայության, մարդու իրավունքների, կոռուպցիայի, արդարադատության մատչելիության մարտահրավերները» խորագրով հանդիպում-քննարկում, որին մասնակցել են ՀՀ փաստաբանական դպրոցի ունկնդիրներ, դասախոսներ, «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ներկայացուցիչներ:

Քննարկումն իրականացվել է ԱՄՆ-ի պետական դեպարտամենտի Թմրադեղերի դեմ միջազգային պայքարի և իրավապահ համագործակցության բյուրոյի կողմից իրականացվող ծրագրի շրջանակներում:

Ծրագիրն իրականացնում է Միացյալ Թագավորության Նոթինգեմի իրավաբանական դպրոցը՝ Երևանի պետական համալսարանի իրավաբանական ֆակուլտետի հետ համատեղ:

Քննարկմանը բացման խոսքով հանդես է եկել ՀՀ փաստաբանների պալատ նախագահ Արա Ջոհրայանը՝ նշելով, որ բարձր է գնահատում Հայաստանում ԱՄՆ դեսպանատան հետ Փաստաբանների պալատի շարունակական համագործակցությունը: «Այս ծրագրի նպատակն է ստեղծել միասնական ուսումնական և կրթական հարթակ, որտեղ փաստաբանները, այդ թվում՝ հանրային պաշտպանները, ՀՀ փաստաբանական դպրոցի աշխատակիցները և ունկնդիրները հնարավորություն կունենան քննարկելու և համագործակցելու արդարադատության համակարգում մարդու իրավունքների և կոռուպցիայի դեմ պայքարի թեմաների շուրջ», - ասել է փաստաբանների պալատի նախագահը:

Ողջույնի խոսքով հանդես է եկել ՀՀ փաստաբանական դպրոցի տնօրեն Սիմոն Բաբայանը, որին հաջորդել է հիմնական զեկուցող, Միացյալ Թագավորության Նոթինգեմի իրավաբանական դպրոցի ներկայացուցիչ Պ. Չենդերսոնի զեկույցը:

Քննարկման ընթացքում մասնակիցները բարձրացրել են բազմաթիվ հիմնահարցեր և պայմանավորվել են հետագայում՝ 2019 թվականի մարտ-ապրիլ ամիսների ընթացքում, կոնկրետ դասընթացների շրջանակում անդրադառնալ դրանց:

Հանդիպում-քննարկումը նախապատրաստական գործառույթ ուներ՝ Հայաստանում մարդու իրավունքների և կոռուպցիայի հիմնական խնդիրներին առնչվող փորձառության և տարբեր շահակիցների տեսանկյուններից մարտահրավերների վերաբերյալ:





Վերադառնալ \$(window).load(function(){ if(typeof \$(".fb\_comments\_count").html() != "undefined" && parseInt(\$(".fb\_comments\_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })